

THE MAIN PROCESS OF THE FORMATION OF VOLUNTARY GROUPS

R. S. HARUTYUNYAN

From the beginning of the formation of voluntary groups further development of the process and especially the re-establishment of the Armenian State System in May 28, 1918 gave the opportunity of having an army in the first months of independence. It is also important to emphasize that the officers staff had an experience of many years which was shown by the Armenian military units and which became the nucleus of the Armenian National Army.

ОСНОВНЫЕ ПРОЦЕССЫ ФОРМИРОВАНИЯ ДОБРОВОЛЬНЫХ ГРУПП

Р. С. АРУТЮНЯН

Начиная с формирования добровольных групп, дальнейшее развитие процессов и особенно восстановление государственности в Армении 28 мая 1918 года создали возможность в первые же месяцы независимости иметь национальную армию. Безусловно, важно отметить, что офицерский состав имел многолетний боевой опыт, который неоднократно демонстрировали военные подразделения армянского армейского корпуса, ставшие ядром армянской национальной армии.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ղ. ԱՓԷՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի Հայաստանի
հարակից երկրների պատմության ամբիոնի հայցորդ*

ԽՍՀՄ փլուզումից հետո ամենաքննարկվող հարցադրումներից մեկը դարձավ Ռուսաստանի գերտերություն¹ւն, թե ընդամենը մեծ պետություն լինելու կարգավիճակի հարցը: Աշխարհագրորեն այն այսօր էլ շարունակում է մնալ աշխարհի ամենամեծ, իսկ բնական պաշարներով՝ ամենահարուստ երկրներից մեկը, որն իր աշխարհագրական դիրքով կամրջում է Արևելքն ու Արևմուտքը, Հարավն ու Հյուսիսը: Աշխարհագրական համեմատական բարվոք տեղաբաշխվածությունը, բնական պաշարների առատությունը, մշակակալի ռազմական, ռազմարդյունաբերական և ռազմավարական սեզմենտի առկայությունը, համաշխարհային քաղաքականությունում հակակշիռ մեխանիզմի գործառույթ իրականացնելու կարողությունը հուշում են, որ նա «պարտավոր» է լինել գերտերություն: Ինչպիսին էլ որ լինեն նորօրյա Ռուսաստանի վերաբերյալ հնչեցված բազմապիսի գնահատականները, մի բան ակնհայտ էր. վերջինս վաղ թե ուշ ստիպված է վերագնահատելու և վերագտնելու սեփական ինքնությունը:

Ցանկացած պետության ռազմաքաղաքական ազդեցիկության որոշիչը վերջինիս տնտեսական կարողություններն են: Եթե մեր եզրահանգումները կատարենք քաղաքական, տնտեսական, ռազմաքաղաքական չափորոշիչներին համապատասխան, ապա կարելի է եզրակացնել, որ Ռուսաստանը հետխորհրդային ժամանակաշրջանում չի համապատասխանում համաշխարհային գերտերության հատկանիշներին: Ամենևին էլ չերկրորդելով գնահատման չափորոշիչները, պնդենք, որ այն ունի իր բացառությունները և այդ ամենը կարելի է ընդունել վերապահումներով:

Խորհրդային Միության փլուզմամբ կրճատվեցին Ռուսաստանի «տիրույթները», այն էլ՝ ամենաշահեկան հատվածներում, սակայն այդ իրավիճակում էլ նա շարունակում է իրենից ներկայացնել հզոր աշխարհագրական և ռազմաքաղաքական կազմավորում: Իր ողջ պատմության ընթացքում Ռուսաստանի արտաքին քաղաքական ուրվագծերն աչքի են ընկել իրենց շարժունակության բարձր հատկանիշներով, որոնցում մեծամասամբ արձանագրվել է ձեռքբերման բերկրանքը, քան կորստի թախիծը: Սփռվածության, բնական պաշարների առատության, ռազմավարական նշանակության զինատեսակների տիրապետման, ինչպես նաև Եվրասիայում զբաղեցրած շահեկան տեղաբաշխվածության պատճառով էր, որ նույնիսկ ՆԱՏՕ-ի նախկին գլխավոր քարտուղար Մ. Վերները, Մերձբալթիկայի երկրներ կատարած այցելության ժամանակ, ՌԴ-ին անվանել էր մեծագույն աշխարհաքաղաքական մասսա, որին անհնար է անտեսել:¹

Անհերքելի է, որ միջուկային զինանոցի առկայությունը դեռ երկար ժամանակի վիճակի է լինելու ապահովել ՌԴ անվտանգությունն ու առաջնային դերակատարումը ռազմաքաղաքական բաղադրյալում, հանգամանք, որը չի կարող հաշվի չառնել և ոչ մի համաշխարհային գերտերություն՝ իր քաղաքական ուղեգիծը մշակելիս, չէ՞ որ աշխարհում դեռ ոչ ոք չի անտեսում ուժի դերն ու նշանակությունը:

Ուշագրավ է նաև այն առանձնահատկությունը, որ Ռուսաստանը պատմության ընթացքում դրսևորել է «խոր քնից» արթնանալու և աշխարհի հզորների շարքում կանգնելու իր բացառիկ ունակությունը:

Աշխարհի հզորագույնների շարքերում սեփական երկրի դիրքերը վերականգնելու ձգտումը պետության ղեկավարությանը ստիպեց լրջությամբ վերաբերվել ՌԴ ազգային առաջնայնություններին:

Հիմնականում իննսունականների վերջերից սկիզբ առած քաղաքական ուղղություններում աստիճանաբար նկատելի էին դառնում պաշտոնական Մոսկվայի ռազմավարական համագործակցության ուղենիշները, իսկ նրա արտաքին քաղաքականությունը մշակվում էր հեռահար և տևական ժամանակաշրջանի համար՝ շեշտադրման կենտրոնում ունենալով նախկին ԽՍՀՄ աշխարհաքաղաքական միջավայրի վերականգնումն ու ամրապնդումը, սակայն այս անգամ որակական այլ հարթությունում:

Խորհրդային Միության տարածքը ՌԴ-ի համար ներկայացնում է կենսական հետաքրքրությունների գոտի, որում գտնվում է վերջինիս տնտեսական և ռազմական անվտանգության բանալին: ԽՍՀՄ փլուզման առաջին տարիներին ՌԴ

¹ *Thorun Christian.*, Explaining Change in Russian Foreign Policy: The Role of Ideas in post-Soviet Russia's Conduct Towards the West, London 2009, p., 29.

ղեկավարությունը, նաև առարկայական պատճառների բերումով, անկարող գտնվեց հստակ ստանձնելու իր նախկին «տիրույթները» վերականգնելու պատասխանատվությունը: Դա պայմանավորված էր ինչպես վերը հիշատակված հիմնախնդիրներով, այնպես էլ ներքին կյանքի բոլոր բնագավառներում տիրող խառնաշփոթությամբ, ինչը որոշակի սառնության ու զգուշավորության շունչ էր հաղորդում ինքնահաստատման շեն ոտք դրած նորանկախ հանրապետություններին:

Սակայն այդ ժամանակահատվածում ՌԴ արտաքին քաղաքականության առաջնայություններից դարձավ կորսյալ աշխարհաքաղաքական միջավայրի վերականգնումը՝ առաջնային ուղեգծում՝ նախկին ԽՍՀՄ շրջանակներում: Ռուսաստանը տնտեսական թուլության պատճառով ի գործու չէր առաջարկել վերաինտեգրմանը նպաստող այլ միջոցներ՝ բացառությամբ ռազմական և էներգետիկայի բնագավառներում համագործակցության:

Նախ ռազմական համադրույթի վերաբերյալ հարկ է ընգծել, որ ԽՍՀՄ առանձին երկրների պաշտպանական գործընկերության խնդիրները բխում էին ինչպես վերջիններիս շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական առարկայական իրադրությունից, այնպես էլ ՌԴ ռազմական համադրույթի և 1994թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին՝ ԱՊՀ պետությունների հետ կապերի խորացմանը միտված արտաքին քաղաքականության նոր ուղեգծի հռչակումից: Չնայած հետխորհրդային տարածքում և առհասարակ աշխարհում 1991թ.-ից ի վեր տեղի ունեցած կտրուկ փոփոխություններին, միջուկային լայնածավալ պատերազմի սպառնալիքի վերացմանը և անվտանգության ժամանակակից, առավել ապահով համակարգ ստեղծելու խորհրդային Միության ուղեգծի ժառանգմանը, ռուսական կառավարող շրջանակները պաշտոնապես ընդունում էին, որ Ռուսաստանը դեռևս ունի ռազմական հնարավոր հակառակորդներ: Ուշագրավ է, որ հանդես գալով 1994թ. հունիսի 18-ին ԱՊՀ Պաշտպանության նախարարների խորհրդի նիստում, հիշյալ կառույցի քարտուղար, գեներալ Լ. Իվաչովը, Ռուսաստանի և ԱՊՀ-ի հնարավոր հակառակորդների շարքում, ի թիվս մի շարք երկրների, թվարկեց նաև ԱՄՆ-ի և Թուրքիայի անունները:²

Հատկանշականն է, որ հիշատակված բոլոր երկրներն էլ ձգտում էին որոշակի դերակատարման Հարավային Կովկասի տարածքում, որը պաշտոնական Մոսկվայի կողմից դիտարկվում էր որպես սպառնալիք: Դա հիմնականում պայմանավորված էր քաղաքական ու տնտեսական ազդեցության գործոնների հնարավոր կորստով, Հարավային Կովկասի տարածաշրջանի՝ ԽՍՀՄ փլուզումից հետո ձեռք բերած հատուկ կարգավիճակով:

Սկզբնական շրջանում խնդիրն այն էր, որ Կենտրոնական Ասիայում ազդեցության հաստատման համար ծավալվեց լուրջ մրցակցություն, քանի որ Հարավային Կովկասը ճակատագրական դարձավ այն որոշման համար, թե ով է ստանձնելու Կենտրոնական Ասիայի նավթի հնարավոր հոսքի վերահսկումը, և այն ինչ ճանապարհով է հասնելու Արևմուտք:

Մոսկվան, ելնելով սեփական տնտեսական և ռազմավարական շահերից, առաջարկում էր ռուսական ճանապարհը, իսկ Արևմուտքն էլ, իր հերթին, ետ-

² *Пушков М.* Тактика контрудара, М., 1999, с. 52.

խորհրդային ժամանակաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը սահմանափակելու այլընտրանքներ էր փնտրում:³

Ռուսաստանի և Արևմուտքի միջև հակասությունները կրում են առարկայական բնույթ, իսկ դրանց միջև հարաբերությունների պարբերական սրումն առավել քան ընկալելի է: Ընդհանուր առմամբ այդ երևույթը կարելի է բացատրել կողմերի անվստահությամբ: Ռուսաստանը զգուշանում էր Եվրոպայից մեկուսանալուց և իր սահմաններին ՆԱՏՕ-ի հետզհետե մոտենալուց, իսկ Արևմուտքն էլ, իր հերթին, երկյուղում էր անկայուն կամ հակառակը՝ կայուն և ուժեղ, բայց կայսերական ձգտումներով Ռուսաստանից:

Այս առումով, նույնիսկ ոչ կայսերական Ռուսաստանը կշարունակի մնալ Արևմուտքի ռազմավարական հակառակորդը:

Հարավային Կովկասի առնչությամբ Արևմուտքի և Ռուսաստանի միջև վերոնշյալ բնական հակասությունները դրսևորվեցին առանձնապես խտացված ձևով: Այս առումով հետաքրքիր է ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի և Ռուսաստանի միջև Հարավային Կովկասում ազդեցության համար մղվող պայքարը, որի պատճառներից էր թուրք առաջնորդների հաճախ հնչեցրած սադրիչ մտքերն առ այն, թե իբրև Անկարան պատրաստ է իր հովանու ներքո միավորել թրքալեզու ժողովուրդներին:⁴

Թուրքիայի՝ որպես ՆԱՏՕ-ի անդամ պետության և Ռուսաստանի միջև հակադրությունն արտահայտվեց, մասնավորապես, «թևային սահմանափակումների» շուրջ տարածայնություններում: Խոսքը 1989թ. ՆԱՏՕ-ի և Վարշավայի պայմանագրի կազմակերպության միջև ստորագրված՝ «Եվրոպայում սովորական զինված ուժերի սահմանափակման և կրճատման» որոշման մասին է, որով հաստատվել էին նրանց դիմակայության սահմանների փակման համար զինված ուժերի և ռազմական տեխնիկայի տեղակայման առավելագույն չափաբաժինները: ԽՍՀՄ-ի փլուզումից և Վարշավայի պայմանագրի կազմակերպության կազմալուծումից հետո պարզվեց, որ այն ուժերը, որոնք Ռուսաստանը կարող է ունենալ հարավ-արևմտյան ուղղությամբ, բավարար չեն ոչ պաշտպանության, ոչ էլ տարածաշրջանում, այդ թվում և Հարավային Կովկասում, իր ազդեցությունը պահպանելու համար: Ռուսաստանի ռազմական գերատեսչության բարձրաստիճան ներկայացուցիչները քանիցս հայտարարել են, թե ամենայն լրջությամբ են վերաբերում նախկին ԽՍՀՄ-ի հարավում իսլամական արմատականության տարածման սպառնալիքին:

Նշենք, որ 1991-1994թթ. ռուսական սպայակազմը հետևողականորեն քննարկում էր ԱՊՀ անվտանգության համար ռազմական սպառնալիք ներկայացնող երկրների ցանկը, որում ընդգրկված էր նաև Թուրքիան: Այդ ժամանակաշրջանում Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության մեջ Նախիջևանի գործոնն ընդգրկելու՝ Ադրբեջանի և Թուրքիայի փորձերին ի պատասխան Մոսկվայից սպառնալիքներ հնչեցին՝ վերանայել Նախիջևանի քաղաքական կարգավիճակը, որն ամրագրվել էր խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1921թ. կնքված Կարսի և Մոսկվայի պայմանագրերով:

³ *Herzig E.* The New Caucasus: Armenia, Azerbaijan and Georgia, London, 1999, p. 53.

⁴ *Новиков Н.* Проблемы тиранизма. М., 2000, с. 112.

Ուշագրավ է, որ 1991-2001թթ. ընկած ժամանակահատվածում իսլամական սպառնալիքը չէր շաղկապվում Իրանի հետ: Ավելին՝ քաղաքական, դիվանագիտական մոտեցումներ մշակելով կամ Հարավային Կովկասում տարբեր քայլեր իրականացնելով՝ Ռուսաստանի Դաշնությունը ջանադրաբար խուսափում էր իսլամական արմատականության գործոնի հիշատակումից, փորձելով չվիրավորել Արևմուտքին դիմադրելու խնդրում իր՝ կամա, թե ակամա, ռազմավարական դաշնակիցը դարձած Իրանին: Ռազմավարական համագործակցության հարցերը Ռուսաստանի համար ինչպես ռազմավարական նշանակություն ունեցող հարավի, այնպես էլ նախկին խորհրդային Միության հարակից շրջանների իրական անվտանգությունն ապահովելու առումով մինչև 2001թ. այդպես էլ արդյունավետ լուծում չստացան: ԱՊՀ շրջանակներում Ռուսաստանին այդպես էլ չհաջողվեց հասնել ռազմավարական հիմնական խնդիրների կարգավորմանը, ինչը պայմանավորված էր ռազմական սերտաճման հարցում ԱՊՀ մի շարք պետությունների զգուշավոր դիրքորոշմամբ, որը հիմնականում հատուկ էր ՎՈՒՈԱՄ-ի անդամ պետություններին:

Գաղտնիք չէ, որ ռազմական համագործակցության հարցում ընտրության իրավունքը պատկանում է հենց Մոսկվային, և ուղղությունների ուսումնասիրությունը վկայում է, որ Հավաքական անվտանգության համակարգի ամրապնդման համար ՌԴ կողմից հայեցակարգային քայլերը պիտի ծավալվեին առավել նպատակային: ԱՊՀ արտաքին սահմանների համատեղ պաշտպանության հիմնախնդիրն ուսումնասիրվող ժամանակաշրջանում շարունակել է գտնվել ՌԴ անվտանգության հայեցակարգում, իսկ ընդհանուր սահմանի ստեղծման փորձերը հիմնականում համապատասխանել են ԱՊՀ անդամ որոշ պետությունների շուրջ լարվածության առկայությանը: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ նախկին խորհրդային հանրապետություններից շատերը, եթե ոչ բոլորը, ի վիճակի չէին ապահովելու սեփական սահմանի լիակատար անվտանգությունը: Սակայն համագործակցության ոչ բոլոր պետություններն ընդունեցին պաշտոնական Մոսկվայի առաջարկը՝ ռուսաստանցի սահմանապահներին ԱՊՀ պետությունների սահմաններում տեղակայելու վերաբերյալ: Այդ երկրներից էր նաև Ադրբեյջանը, որը հրաժարվեց նման ծառայությունից: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա այն, ելնելով իր ներքին անկայուն իրավիճակից, այն էլ զովհադիստների կտրուկ ակտիվացման շրջանում, ստիպված էր տեղի տալու ռուսական առաջարկներին և համաձայնել, որ իր տարածքում ստեղծվեն այլ պետության ռազմահենակայաններ:

Նշենք, որ ռազմակայանների տեղակայման վերաբերյալ իշխանությունների տված համաձայնությունն այդպես էլ չվավերացվեց վրաց խորհրդարանականների կողմից, որի արդյունքում, սկսած 2000թ-ից Վրաստանն իր տարածքից հանեց ռուսական սահմանապահներին՝ հասնելով նրան, որ վերջինները դուրս բերվեցին նաև Աբխազիայից և Հարավային Օսիայից: Ռուսաստանը թեև դուրս բերեց իր սահմանապահներին վրացական իշխանությունների կողմից չվերահսկվող տարածքներից, բայց կարողացավ տեղում պահել ռուս խաղաղապահներին, այդպիսով ապահովելով իր ներկայությունը հիշյալ տարածքներում:

Հարավային Կովկասում Մոսկվայի նախաձեռնությունն արժանացավ միայն Հայաստանի Հանրապետության հավանությանը, որի արդյունքում 1992թ. սեպ-

տեմբերի 30-ին Երևանում ստորագրվեց հայ-թուրքական և հայ-իրանական սահմանների համատեղ պաշտպանության վերաբերյալ հայ-ռուսական, ինչպես նաև Հայաստանի և Ռուսաստանի սահմանապահ ծառայությունների համագործակցության մասին համաձայնագրերը, որոնց իրականացման շրջանակներում Հայաստանի տարածքում տեղակայվեց Կովկասյան հատուկ սահմանապահ օկրուգի Ռուսաստանի սահմապահ զորքի «Արմենիա» հատուկ խումբը:⁵

ՌԴ-ին հատկապես մտահոգում էր Ադրբեջանի՝ Թուրքիայի և Իրանի հետ ունեցած սահմանների պահպանության հարցը, քանզի, ռուսական իշխանությունների կարծիքով, այդ սահմաններում իրենց հսկողության բացակայությունը կարող է խթանել զենքի և թմրանյութերի հոսքը, արմատական գաղափարների տարածումը, ինչպես նաև Ադրբեջանում Թուրքիայի և Իրանի ազդեցության ուժեղացումը: Սահմանի պաշտպանության համատեղ հայեցակարգի նկատմամբ Ադրբեջանի դիրքորոշման մեջ առ այսօր էլ գերիշխում է առևտրային հաշվարկի որոշակի տարրը: Ադրբեջանն, ըստ էության, նախկինում էլ պատրաստ էր իր սահմաններում ռուսաստանցի սահմանապահների տեղակայմանը, ինչի դիմաց Մոսկվայից պահանջում էր արցախյան հարցի՝ իրեն բավարարող լուծում:

Նշենք, որ Ադրբեջանի իշխանությունների պահանջով Ռուսաստանի սահմանապահ զորքերը 1992-1993թթ. ընթացքում տարիանվեցին թուրք-ադրբեջանական և ադրբեջանա-իրանական սահմաններից: Ռուսաստանցի վերջին սահմանապահներն Իրանա-ադրբեջանական սահմանի Պրիշիբի տեղամասից հանվեցին 1993թ. մարտին: Հետագայում, չնայած Մոսկվայի բազմաթիվ փորձերին, համատեղ սահմանապահականության հարցում չհաջողվեց համաձայնության գալ Ադրբեջանի հետ:

Ուշագրավ է, որ Ադրբեջանի իշխանությունները չընդունեցին ռուսական կողմի առաջարկը՝ ԱՊՀ արտաքին սահմանի պահպանության վերաբերյալ, և դեռ ավելին՝ համաձայնության համար առաջարկեցին տեղակայել ռուսաստանցի սահմանապահներին երկրի սահմանների ողջ պարագծով՝ հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով, ինչի դեպքում Լեռնային Ղարաբաղը փաստորեն կտրվում էր Հայաստանից: Բնական էր, որ ողջ Հարավային Կովկասում տիրապետության ձգտող Ռուսաստանը երբևէ չէր կարող զնալ նմանատիպ ռազմավարական արկածախնդրության, որը և մերժվեց:

Պնդել, թե Ռուսաստանը չուներ և այժմ էլ չունի ԱՊՀ երկրների վրա ռազմաքաղաքական ճնշում գործադրելու լծակներ, որպեսզի նրանց ստիպի ընդունել ռազմական ոլորտում համագործակցության իր առաջարկները՝ ճշմարիտ չէ: Հայտնի է, որ դեռ 1995թ. հունվարին, ի պատասխան արտաքին սահմանների պահպանության հարցում համագործակցելու առաջարկից ադրբեջանական իշխանությունների հրաժարվելուն, Ռուսաստանի իշխանությունները ԽՍՀՄ փլուզումից հետո առաջին անգամ փակեցին Ադրբեջանի հետ սահմանը՝ դա բացատրելով Չեչնիայում տիրող իրավիճակով: Օգտագործելով Ադրբեջանի տարածքով չեչեն անջատողականներին զենք մատակարարելու մասին հրապարակված տեղեկությունները՝ ռուսական սահմանապահները փակեցին ՌԴ-ի և Ադրբեջանի միջև ցամաքային և ծովային սահմանը: Դրա պատճառով սրվեցին

⁵ Տե՛ս <http://www.mid.ru/> ՌԴ Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքը (2009թ.):

Մոսկվայի և Բաքվի փոխհարաբերությունները, իսկ վերջինս սպառնաց նույնիսկ դուրս գալ ԱՊՀ կազմից:

Ինչ վերաբերում է Վրաստանի և Հայաստանի տարածքում ԱՊՀ արտաքին սահմաններին, ապա դրանց նկատմամբ Ռուսաստանը հսկողությունը գրեթե չի կորցրել, այն է՝ Վրաստանի և Հայաստանի արտաքին սահմանների կարևորությունը գիտակցվում էր Խորհրդային Միության կազմալուծումից ի վեր: Ի դեպ, մինչև 1999թ. նույնպես զգալի տարբերություն կար Հայաստանի և Վրաստանի սահմանների պահպանության պայմաններում: Թուրքիայի հետ Վրաստանի սահմանը 1991-ից ի վեր բաց էր, և ամեն տարի աճում էր անցակետերի քանակը, մինչդեռ հայ-թուրքական սահմանը հայտնի պատճառների բերումով շարունակում է մնալ փակված:

Հայ-թուրքական սահմանը բազմիցս լարվածության օջախ է դարձել: 1993-2000թթ. թուրքական կողմը պարբերաբար կրակ էր բացում Հայաստանի տարածքի ուղղությամբ, լայնածավալ զորավարություններ անցկացնում սահմանի ուղղությամբ: Օրինակ՝ նշենք, որ հրաձգային զինատեսակներից մի քանի անգամ գնդակոծվել է Ռուսաստանի սահմանապահ զորքերի «Արմենիա» հատուկ խմբի ուղեկալը: Այդ փաստերը հաստատում էին Թուրքիայից սպասվող ռազմական սպառնալիքի վտանգը և նպաստեցին Հայաստանի ու Ռուսաստանի ռազմական գերատեսչությունների համագործակցության հետագա խորացմանը:

Արևմտյան վերլուծական շրջանակներում լուրեր էին սպրդում առ այն, թե 1994թ-ին ԱՄՆ-ը և Ռուսաստանը համաձայնության են եկել, որ Վաշինգտոնը չի խոչընդոտելու Կովկասում ռուսական զինուժի կողմից եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրի թևային սահմանափակումներով նախատեսված չափաբաժինների փոփոխմանը, փոխարենը Մոսկվան պարտավորվում է նվազեցնել նմանօրինակ գործունեության ակտիվությունը հյուսիսարևմտյան և հյուսիսային ուղղությամբ, այսինքն՝ Ֆինլանդիայի և բալթյան երկրների սահմանների մերձակայքում:⁶ Սակայն հարավային թևում սովորական սպառազինությունների Ռուսաստանի չափաբաժնի մեծացման դեմ կտրուկ հանդես եկավ Թուրքիան: Բացի դրանից, դեպի Արևելք ՆԱՏՕ-ի ընդարձակման հարցում շարունակվում էր խստամալ Արևմուտքի դիրքորոշումը: Ընդ որում, 1996թ. վերջից այդ հարցը պաշտոնապես համարվեց փակված, քանզի ընդլայնման մասին որոշումն ընդունված էր, և ՌԴ-ն անգոր էր հակազդել ՆԱՏՕ-ին նոր երկրների անդամակցությանը:

Նշենք, որ Արևմուտքի այս դիրքորոշմանը Ռուսաստանը պատասխանեց հավաքական անվտանգության համակարգի ստեղծման շուրջ ԱՊՀ ներսում բանակցությունների աշխուժացմամբ:

Ակնհայտ է, որ Հարավային Կովկասի երկրների հետ Ռուսաստանի ռազմական համագործակցության առանցքը Արևմուտքի հետ ռազմավարական մրցակցությունն է: Իննսունական թվականներից Արևմուտքում պատմական սխալ համարվեց Հայաստանի համաձայնությունը իր տարածքում ռուսաստանյան ռազմահեռակետերի ստեղծման վերաբերյալ, ինչն իբրև վտանգում էր հանրապե-

⁶ Gary K. Bertsch, Gassady B. Graft, Scott A. Jones, Micheal D. Beck, Crossroads and Conflict: Security and Foreign Policy in the Caucasus and Central Asia. New York, 2000, p. 40.

տության անկախությունը: Արևմուտքը ճիշտ այդպես վերաբերվեց Վրաստանում ռուսական հենակետերի տեղակայմանը: Դրան խստիվ ընդդիմացավ Թուրքիան, որը Ռուսաստանի այդ գործողությունները որակեց որպես իր դեմ ուղղված քայլ:⁷ Մինչդեռ, Հայաստանի և Ռուսաստանի միջև ռազմական համագործակցությունը հետզհետե խորանում էր, որին ի պատասխան, ինչպես վերը նշվեց, Թուրքիան Հայաստանի Հանրապետության սահմանակից շրջաններում աշխուժացրեց ռազմական պատրաստությունները:

Հարկ է նշել, որ ռուսական կողմը պաշտոնական իր հայ գործընկերների հետ հանդիպումներում հանդես էր գալիս ի օգուտ Հարավային Կովկասում իր ռազմահենակետերը տեղակայելու հարցի արագ լուծման, քանզի դա, ըստ ՌԴ պաշտպանության նախարարության, հանդիսանում է ԱՊՀ հավաքական անվտանգության համակարգի անբաժանելի բաղկացուցիչը:⁸

Հարավային Կովկասի տարածաշրջանում ՌԴ ռազմաքաղաքական նախագծերը Արևմուտքում զնահատում էին իբրև Ռուսաստանի կայսերապաշտական նկրտումների արտացոլանք:⁹

Նշենք, որ Հարավային Կովկասում և մյուս տարածաշրջաններում ռուսաստանյան ռազմական նախաձեռնություններն ավելի հեռահար նպատակներ էին հետապնդում, քան պարզապես ԱՊՀ արտաքին սահմանների պաշտպանությունը կամ մույնիսկ՝ հավաքական անվտանգության համակարգի ստեղծումը: Ռուսաստանի ռազմավարական նպատակն ակնհայտորեն իր շահերի գոտու ընդլայնումն է և հրաժարումը նախկին արտգործնախարար Ա. Կոզիրևի պաշտոնավարության շրջանի արտաքին քաղաքական նահանջների մարտավարությունից: Ըստ էության, 1994թ-ից ի վեր Ռուսաստանի քաղաքական վերնախավն աստիճանաբար սկսեց հրաժարվել միջազգային հարաբերությունների բնույթի մասին ունեցած իր նախկին պատկերացումներից՝ հակվելով մեծատիրական՝ բովանդակությամբ պետականամետ գաղափարախոսության, ինչը ենթադրում էր եռանդուն և կոշտ արտաքին քաղաքական ուղեգծի որդեգրում, իսկ արտաքին հետախուզության ծառայության նախկին ղեկավար Ե. Պրիմակովի՝ արտաքին գործերի նախարարի պաշտոնում նշանակվելը վերջնականապես ազդարարեց կատարված տեղաշարժի փաստը:

Ստեղծված պայմանների բերումով, երբ արևմտյան ուղղություններում խստիվ սահմանափակ էին Ռուսաստանի գորաշարժի հնարավորությունները, հենց հարավարևմտյան ուղղությունը և հատկապես Հարավային Կովկասը դարձան այն հարմար ցատկահարթակը, որտեղից կարելի էր իրականացնել նախանշված նպատակները:

Մոսկվան ԱՊՀ երկրներին, մասնավորապես՝ Հարավային Կովկասի պետություններին, առաջարկեց ռազմական համագործակցության տարբեր ձևեր:

⁷ *Синяйский А.*, Геополитика и национальная безопасность России, Военная мысль М., 1994, N 8, с. 56.

⁸ Տե՛ս ՀՀ Արտաքին գործերի նախարարության Պատմա-դիվանագիտական բաժին, Ցուցակ 1, գործ՝ N 120, ք. 35-36:

⁹ *Cornell S.* Small Nations and Great Powers: A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus, London, 2001, p. 11.

1995թ. մարտին ԱՊՀ շրջանակներում անցկացվեց հայ-ռուսական առաջին համատեղ զորավարությունը, իսկ 1996թ. սեպտեմբերին անցկացված երկրորդ նույնատիպ զորավարությունն աչքի ընկավ իր նախորդին գերազանցող ծավալով և առավել ներկայացուցչական պատվիրակությամբ, որը գլխավորում էր ՌԴ գլխավոր շտաբի պետ գեներալ-գնդապետ Մ. Կոլեսնիկովը:

1995թ. ապրիլին Վրաստանի պաշտպանության նախարարը հանդես եկավ Ռուսաստանի, Վրաստանի և Հայաստանի մասնակցությամբ Հարավային Կովկասում դաշնային զինված ուժեր ստեղծելու, ինչպես նաև եռակողմ զորավարություններ անցկացնելու առաջարկով:¹⁰ Դրան ի պատասխան ՌԴ ցամաքային զորքերի հրամանատար, գեներալ-գնդապետ Վ. Սեմյոնովը հայտարարեց, որ Կովկասյան հատուկ 58-րդ բանակը պետք է տեղակայվի թուրք-վրացական սահմանի ողջ երկայնքով:¹¹

Այս քայլերը դժվար թե գոհացնեին արևմտյան շահագրգիռ երկրներին, որոնք անմիջապես անցան հակազդման. նրանք նախ հանդես եկան ԵԱՀԿ-ի ներքո բազմազգ խաղաղարար զորքի ստեղծման նախաձեռնությամբ, ինչը կարող էր որոշակիորեն հակակշռել Հարավային Կովկասում ռուսական ռազմական ներկայությանը:

Հարավային Կովկասի երկրների հետ կապերի ամրապնդման մեկ այլ միջոց դարձավ ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրի իրագործումը, որն Արևելյան Եվրոպայի երկրների և նախկին Խորհրդային Միության հանրապետությունների մեծ մասին պետք է ընձեռներ ՆԱՏՕ-ի կառույցներում մասնակցություն ունենալու հնարավորություն, նպաստելով փոխվստահության ամրապնդմանը, առաջին հերթին ռազմական բնագավառում: Հասկանալի է, որ ՆԱՏՕ-ն հետաքրքրված չէր ԱՊՀ պետությունների զինված ուժերով, բայց առանձնահատուկ շահագրգռված էր տարածաշրջանում ռուսական ռազմական ներկայության սահմանափակմամբ: Վրաստանն ու Ադրբեյջանը ԱՊՀ երկրներից առաջինն էին, որ դարձան այդ ծրագրի մասնակիցները, մինչդեռ Հայաստանը միացավ Ռուսաստանից հետո միայն: Հարավային Կովկասի պետություններից միայն Ադրբեյջանն էր, որ այդ տարիներին ձգտեց մասնակցել ծրագրին՝ հույս ունենալով հակակշռել Ռուսաստանի ճնշմանը: Հետագայում ադրբեյջանական դիրքորոշման կողմնակից դարձան նաև Վրաստանի իշխանությունները:

Ինչ վերաբերվում է ԱՊՀ մյուս պետություններին, ապա նշենք, որ բացի չեզոք քաղաքական կուրս վարող Թուրքմենստանից, ԱՊՀ բոլոր երկրները միացան վերոհիշյալ ծրագրին: Ավելին՝ Ուկրաինան հասավ նրան, որ ՆԱՏՕ-ն Կիևի հետ սկսեց հարաբերություններ հաստատել «առանձին» հիմունքներով: Հիմնականում նման իրավիճակի բերումով էր, որ Արևմուտքը որոշեց ԱՊՀ ներսում ստեղծել արհեստական երկրորդ կենտրոնը՝ փորձելով ԱՊՀ որոշ երկրներին վերակողմնորոշել Ռուսաստանից Ուկրաինայի կողմը, ինչի արդյունքում ստեղծվեց ՎՈւԱՄ դաշինքը:

Իսկ անդամ-երկրներն էլ, իրենց հերթին, հույս ունեին Աբխազիայից, Հարավային Օսիայից, Մերձդնեստրից դուրս բերել ռուսական խաղաղապահներին և

¹⁰ “Свободная Грузия”, 10 октября, 1996.

¹¹ Նույն տեղում:

դրանք փոխարինել սեփական ուժերով և այդպիսով, քայլ առ քայլ, վերականգնել իրենց տարածքային «ամբողջականությունը», որին, ըստ իրենց, այդքան խոչընդոտում էին ռուս խաղաղապահները: Հատկանշական է, որ ՎՈւԱՄ-ի ստեղծմանը մեծ շահագրգռվածություն ցուցաբերած ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի ներկայացուցիչները մի քանի անգամ կարծիք են հայտնել, թե հեռանկարում կուզենային Երևանին տեսնել այդ դաշինքում:¹²

Նշենք, որ բոլոր ՎՈւԱՄ-ականներն այդ ընթացքում վայելում էին ԱՄՆ-ի, Թուրքիայի և նրանց դաշնակիցների համակրանքը, որը բացատրվում է Հարավային Կովկասում և ԱՊՀ մի շարք տարածաշրջաններում Ռուսաստանի և վերոհիշյալ պետությունների միջև չդադարող ռազմավարական մրցակցությամբ:

Հանրահայտ է, որ Թուրքիան արցախյան ազատամարտի հենց սկզբից էլ տարբեր «խաղարար» նախաձեռնումների և կազմակերպությունների միջոցով ձգտում էր իր ֆիզիկական ներկայությունն ապահովել Հարավային Կովկասի տարածաշրջանում, ինչը հաճախ հանդիպում էր ՌԴ-ի դիմադրությանը: Գործը հասավ նույնիսկ նրան, որ վերջինիս պաշտպանության նախարարը հայտարարեց, որ Հարավային Կովկասում Ռուսաստանի հետաքրքրություններն ավելի քիչ չեն, քան Թուրքիայինը, և վերջինս երբեք չի կարողանա իր զորքերը միակողմանի մտցնել Ադրբեյջան կամ Հարավային Կովկասի այլ շրջաններ, նույնիսկ եթե դրա համար լինի ԵԱՀԿ-ի որոշումը:¹³

Ռուսաստանի քաղաքական շրջանակներում կարծիք էր ձևավորվում, որ Արևմուտքն, ավելի ճիշտ ԱՄՆ-ը, Թուրքիային է վերափստահում Հարավային Կովկասում ռազմական ներկայության հարցը: Ռուսաստանի Դաշնային Սահմանապահ ծառայության տնօրեն Ա. Նիկոլաևը Թուրքիայի հետ Վրաստանի և Հայաստանի սահմանները բնութագրեց որպես Ռուսաստանի ազգային անվտանգության համակարգի առաջին գիծ:¹⁴

Հենց դա էր պատճառը, որ Ռուսաստանի ցամաքային զորքերի հրամանատար Վ. Սեմյոնովը, խոսելով մարտական նոր միավորի՝ Կովկասյան հատուկ բանակի ստեղծման անհրաժեշտության մասին, ընդգծել էր, որ Ռուսաստանի ազգային շահերը վեր են ԵԱՀԿ-ի ցանկացած պայմանագրից:¹⁵

1995թ. օգոստոսի 30-ից սեպտեմբերի 1-ը Երևան կատարած այցելության ժամանակ Ռուսաստանի ներկայացուցիչները նշում էին, թե ցանկալի է, որ Հայաստանը հնարավորինս շուտ վավերացնի Հայաստանում Ռուսաստանի զինված ուժերի հենակետի վերաբերյալ հայ-ռուսական պայմանագիրը, քանի որ Հայաստանն ու Ռուսաստանը Հարավային Կովկասում ունեն կենսական կարևորություն ներկայացնող ընդհանուր շահեր:¹⁶

Այս մեջբերումից պարզ էր դառնում, որ Ռուսաստանը հնարավոր կորուստներից խուսափելու նպատակով շտապողական նյարդայնություն էր դրսևորում և, իր ներկայությանն օրինական բնույթ հաղորդելու նպատակով, շտապեցնում է

¹² Чернявский С. Южный Кавказ в планах НАТО. Международная жизнь. N 3. М., 1998, с. 8.

¹³ “Известия”, 17 июня, 1996.

¹⁴ “Российская газета”, 18 октября, 1994.

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ “Известия”, 31 августа, 1995.

իր դաշնակցին:

1994-1995թթ. հետո Հարավային Կովկասում ռազմական ոլորտում մի շարք լուրջ փոփոխություններ տեղի ունեցան, որոնցից կարևորվում է 1996թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև ռուսական ռազմակայանների տեղակայման նպատակով ՀՀ-ում տարածք հատկացնելու վերաբերյալ համաձայնագիրը:¹⁷

1998թ. հայ և ռուս խորհրդարանականները վավերացրին Հայաստանի տարածքում ռուսական սահմանապահ զորքերի կարգավիճակի, ինչպես նաև Գյումրիում տեղակայված ռուսական 102-րդ ռազմահեծակետի վերաբերյալ փաստաթուղթը:

1998-2000թթ. ռուսական կողմը Հայաստանի համաձայնությամբ իրականացրեց ՀՀ տարածքում իր զորամասերի և ստորաբաժանումների լրացուցիչ սպառազինումն ու վերազինումը: Հատկապես հզորացավ հակաօդային պաշտպանության զորքերի խմբավորումը և այլն:

Այս պայմաններում ռազմավարական առաջնային ուղղություններից մեկը դառնում էր հենց կովկասյանը, որը, դատելով տարածաշրջանում Վրաստանի հակառուսական գործունեության սաստկացումից, լիովին կարելի էր համարել հայկական ուղղություն:

ՌԴ ռազմաքաղաքական շրջանակներում հիմնականում տիրում էր այն կարծիքը, որ Հարավային Կովկասում հավաքական անվտանգության տարածաշրջանային համակարգը ստեղծվել է և պետք է ամրապնդվի հենց Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական համագործակցության հիման վրա: Հետագայում ևս այդ համակարգում գլխավոր դերակատարությունը կունենան հայկական և ռուսական ուժերի արագ արձագանքման համատեղ դաշինքային ուժերը:

Նշենք, որ հայ-ռուսական նմանատիպ միջոցառումներն անհանգստությունների տեղիք տվեցին Արևմտյան երկրներին, որոնց խոսնակի դերում, ի հետամուտ սեփական շահերի, հանդես եկավ Թուրքիան, որը Վրաստանում նախկին ռուսական ռազմահեծակետներ գործուղեց իր զինված ուժերի փորձագետներին, ինչպես նաև սկսեց իրականացնել լայնածավալ ռազմական մատակարարումներ:¹⁸

Պարզամտություն կլիներ կարծել, թե այդ քայլը չէր ուղղորդվում ՆԱՏՕ-ի և մասնավորապես ԱՄՆ-ի կողմից՝ նպատակ ունենալով իրականացնել ՆԱՏՕ-ի զինուժի աստիճանական ներթափանցումը տարածաշրջան:

Նշենք նաև, որ նույն Թուրքիան Վրաստանին խոստացավ համապատասխան միջոցներ տրամադրել Վազիանիի ենթակառուցվածքի զարգացման, ինչպես նաև Մառնեուլի ռազմական օդանավակայանի արդիականացման համար:¹⁹

Միևնույն ժամանակ, ռազմական ոլորտում Ռուսաստանի և Վրաստանի փոխհարաբերությունները զարգացան այլ ուղով: 1998 թ-ից սկսած վրացական կող-

¹⁷ http://www.mid.ru/BDOMP/spd_md.nsf/0/F881FA803AD42D3E44257AFB0028B60A, ՌԴ Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք (2007թ.):

¹⁸ *Цыганок А.*, Россия на Южном Кавказе: грузино-осеттинская война 8-13 августа 2008 года, М., 2010, с. 73.

¹⁹ *Чернявский С.*, Южный Кавказ в планах НАТО. Международная жизнь. М., 1998, N 3, с. 6.

մը պահանջում էր ռուսաստանյան սահմանապահ զորքն ամբողջությամբ դուրս բերել Վրաստանից՝ դա փաստարկելով սեփական ուժերով իր սահմանները պաշտպանելու կարողությամբ:²⁰ Պաշտոնական Թբիլիսիի փաստարկի էությունը հանգում էր նրան, որ Վրաստանն իր հարևանների հետ չունի որևէ էական հակասություն, ուստի վրաց-թուրքական սահմանի համատեղ պաշտպանության կարիքը չկա: Կարելի է ասել, որ 1998-1999թթ. ընթացքում ՌԴ-ն ռեալ գործողությունների առումով լրջորեն չէր ընդդիմանում Վրաստանի նմանատիպ քաղաքականությանը, և ռուսական սահմանապահ ստորաբաժանումները դուրս բերվեցին նույնիսկ Աբխազիայից, Չարավային Օսիայից և Աջարիայից՝ չնայած տեղական իշխանությունների հանդիմանալուն:

Վրացական իշխանությունները նպատակ ունեին չվերահսկվող ինքնավարությունների արտաքին սահմանների պաշտպանության պատրվակով վերականգնել սեփական դիրքերը փաստացի կորուսյալ տարածքների նկատմամբ:

Ինչպես պարզվեց, հետագայում վրացական իշխանություններին չհաջողվեց իրագործել վերոհիշյալ մտահղացումը, որի մեղքը նրանք սկսեցին դնել Մոսկվայի վրա՝ վերջինիս մեղադրելով կայսերապետական ձգտումներում:

Սա էր այն հիմնական պատճառներից մեկը, որի համար Թբիլիսին շատ շուտով պահանջեց Վրաստանի տարածքից դուրս բերել նաև ՌԴ զորքերն ու ապամոնտաժել ռազմական օբյեկտները: Որքան էլ տարօրինակ է՝ ՌԴ-ն առանձնապես չընդդիմացավ նաև այս պնդումներին, և շուտով, որպես հետևանք, վերացվեց Սևծովյան նավատորմի Փոթի ռազմածովային հենակետը: 1999-2000թթ. ընթացքում կասեցվեց ռուսական ռազմահենակետերի գործունեությունը Վազիանիում և Գուդաուտայում: Լուրջ դժվարություններ ծագեցին Բաթումիի և Ախալքալակի ռազմակայանների ճակատագրի շուրջ ընթացող ռուս-վրացական բանակցությունների ժամանակ: Ռուսական կողմը մտադրություն հայտնեց այդ ռազմահենակետերը պահպանել ևս 15 տարով, մինչդեռ Վրաստանը համաձայն էր սպասել երկու տարուց ոչ ավելի:²¹ Թբիլիսիին հետագա բանակցությունների արդյունքում հաջողվեց հասնել ռուսական զորքի դուրսբերմանը, որը միանշանակ որակվում է ՌԴ-ի՝ Չարավային Կովկասի ճակատում կրած լրջագույն պարտություններից մեկը: Իհարկե, ռուսական ներկայությունը տարածաշրջանում պահպանվեց, սակայն արդեն հարց էր, թե որքանով էր այն պատրաստ իրականացնելու իր առջև դրված մարտավարական և ռազմավարական հիմնախնդիրները:

Այս հանգամանքում ՌԴ ռեալ ռազմական ներկայությունը Չարավային Կովկասում հիմնականում ապահովվում էր Հայաստանի Հանրապետության շնորհիվ:

Հարկ է նշել, որ սպասարկող և տվյալ օբյեկտի անվտանգությունն ապահովող շուրջ 2000-ոց ռուսական անձնակազմ կար նաև Ադրբեյջանում՝ ՌԴ-ի կողմից վարձակալվող Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանում:

Իրավիճակին որոշակի սրություն էր հաղորդում նաև այն հանգամանքը, որ Հայաստանում տեղակայված ռուսական ռազմաբազան անկլավացման պատ-

²⁰ Տե՛ս “Азия и Африка сегодня”, М., 2005, N 2.

²¹ **Кружевников А.** Соображения по вопросу военного присутствия в странах Закавказья, Санкт-Петербург, 2001, с. 68.

ճառով զուրկ է ցամաքով զորքերի շղթայական կապից, որն անշուշտ նվազեցնում էր նրա մարտավարական հնարավորությունները, սակայն գաղափարական առումով այն ազդեցիկ է ու գործում՝ ունակ ցանկացած պահի ապահովելու տարածաշրջանում արտաքին ուժերին դիմակայելու գործում ՌԴ միջամտության իրավական հիմքերը:

Ինչ վերաբերում է 1991-2001թթ. ռազմական ոլորտում ռուս-ադրբեջանական կապերին, ապա կարելի է փաստել, որ չհաշված Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանում համագործակցությանը, պաշտոնական Մոսկվային այդպես էլ չհաջողվեց կորզել Բաքվի համաձայնությունը Ադրբեջանի պետական սահմանը ռուսական զինուժի հետ համատեղ պաշտպանելու վերաբերյալ:

Կարելի է ենթադրել, որ Ադրբեջանը նույնպես փորձել է իր տարածքում ռուսական սահմանապահ զորքերի ներկայության և ռուսական ռազմահենակետերի տեղակայման հարցերը դարձնել Մոսկվայի հետ առևտրի առարկա՝ արցախյան խնդրի կարգավորման շուրջ, և առաջ է քաշում իր հակապայմաններն ու առաջարկությունները, որոնց Ռուսաստանը, ուսումնասիրվող շրջանում, կարծում ենք չի համաձայնվել: Սակայն գործնականում Ադրբեջանը շահագրգռված էլ չէր իր տարածքում ռուսական զորամասերի տեղակայման խնդրում և Բաքուն չէր ցանկանում, որ որևէ երրորդ կողմ այս կամ այն չափով վերսկսի Նախիջևանում թուրք-ադրբեջանական սահմանի հսկողությունը:

Բաքվի նմանատիպ վարքագծին ռուսական իշխանությունների պատասխանը գործնականում միշտ եղել են միջազգային ահաբեկիչներին ադրբեջանական իշխանությունների ցուցաբերած աջակցության և Ադրբեջանի տարածքը սպառազինությունների, թմրամիջոցների ու օտարերկրյա վարձկանների տարանցիկ անվերահսկելի գոտու վերածելու հարցը միջազգային ասպարեզում բարձրացնելու սպառնալիքները:

Մասնավորապես, ուշագրավ էր հատկապես ՌԴ Պետդումայի անվտանգության հարցերով հանձնաժողովի անդամ Վ. Իլյուխինի այն միտքը, որով նա մեղադրում էր Ուկրաինային, Ադրբեջանին և Վրաստանին՝ չեչեն գրոհայիններին և «Թալիբան» աֆղանական շարժման զորքերին զենք մատակարարելու մեջ:²²

Ակնհայտ է, որ մեղադրվում էին ՎՈւԱՄ անդամ այն երեք պետությունները, որոնք ռազմական ոլորտում Ռուսաստանի հետ մերձեցման համապատասխան քայլեր դեռ չէին ձեռնարկել:

Ուշագրավ է, որ Ռուսաստանի այս կոշտ քայլից հետո Ուկրաինայի նախագահ Լ.Կուչման պաշտոնական նամակով պատրաստվում էր դիմել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջ. Ռոբերտսոնին՝ խնդրելով իր երկիրն ընդգրկել Յուլսիսատլանտյան դաշինքի կազմում:²³

Կարելի է նկատել, որ Ռուսաստանի «սպառնալիքները» վերաբերել ու վերաբերում են առաջին հերթին այն հանրապետություններին, որոնք ձգտել ու ձգտում են անդամակցել ՆԱՏՕ-ին և չեն ցանկանում իրենց գործողությունները համակարգել Կրեմլի հետ:

Ռուսաստանին, ուսումնասիրվող ժամանակահատվածում, գլխավորապես

²² *Балецкий Я.*, Проблемы и перспективы, М., 2004, с. 93.

²³ “Русский журнал”, 30 мая, 2002.

հետաքրքրում էին ռազմական և ռազմաքաղաքական բնույթի նախաձեռնությունները, ընդ որում՝ ամենից առաջ ԱՊՀ տարածքում: Սակայն պնդել, թե վերոնշյալին ուղղված քայլերը մշտապես առանձնացել են իրենց գործնական ակտիվությամբ՝ ճշմարիտ չէ: Հարկավոր է նաև հաշվի առնել, որ ԱՊՀ-ում համագործակցության ընթացքը ժամանակ առ ժամանակ ապակողմնորոշվում էր: Առաջին հերթին դա պայմանավորվում էր Ռուսաստան-ԱՄՆ և Ռուսաստան-ՆԱՏՕ հարաբերությունների զարգացմամբ:

Օրինակ՝ արագ ծավալման դաշինքային ուժերի հետ կապված իրավիճակը: Այդ կառույցը Ռուսաստանի նախաձեռնությամբ և գործուն աջակցությամբ սկսեց կազմակերպվել դեռևս 2001 թ. հուլիսից: Ինչպես հայտարարվել էր, այն ձևավորում էին Կենտրոնական Ասիայի ուղղությամբ և տեսականորեն պարզ էր, որ նախատեսվում էր կառույցը օգտագործել հենց աֆղանական թալիբյան շարժման վարչախմբից բխող միջազգային ահաբեկչության վտանգի հնարավոր տարածման դեմ եռանդուն պայքարի համար: Սակայն 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ԱՊՀ Արագ Ծավալման Հավաքական Ուժերի /ԱԾՀՈ/ «Հարավկովկասյան» և «Բելոռուսական» կորպուսների ձևավորման գործընթացը դադարեցվեց, որը, կարծում ենք, կապված էր Ռուսաստան-ԱՄՆ և Ռուսաստան-ՆԱՏՕ հարաբերություններում սկզբնական դիրքորոշման որոշակի վերանայման հետ:

Այսպես թե այնպես, ԱՊՀ ԱԾՀՈ ստեղծման մասին որոշումը, որն ընդունվել էր Երևանում կայացած ԱՊՀ պետությունների ղեկավարների 2001թ. մայիսյան զագաթնաժողովի ժամանակ, ընկալվեց որպես ռազմական համագործակցության զարգացման որակական նոր փուլի սկիզբ, ամենից առաջ՝ ԱՊՀ ՀԱՊ-ի շրջանակներում: Սկզբունքորեն նոր տիպի արագագործ ուժերի ստեղծման գաղափարը ԱՊՀ-ում նորություն չէր, դեռ նախկին՝ Խորհրդային Միության տարածքի նորանկախ պետությունների ռազմաքաղաքական կառույցների ձևավորման առաջին փուլում նախատեսվում էր ԱՊՀ-ի հավաքական խաղաղարար ուժեր ստեղծել, որոնք պատրաստ կլինեն ԱՊՀ-ի տարածքում թեժ կետեր տեղափոխվել սեղմ ժամկետներում:

Հատկանշական է, որ Ռուսաստանը, տվյալ ժամանակահատվածում, ԱՊՀ անդամ ՀԱՊԿ երկրների հետ ռազմական բաղադրյալի ինտեգրմամբ, առարկայական պատճառներով, ձգտում էր ապահովել սեփական անվտանգությունն ու պաշտպանունակությունը, որի իրականացումը պետք է ապահովեր այդ թվում Հարավային Կովկասում գերակայության հարատևությունը:

Այսպիսով, տարածաշրջանին առնչվող ՌԴ արտաքին քաղաքականության մեջ գնալով ավելի ու ավելի մեծ կշիռ էր ձեռք բերում այն մեթոդաբանությունը, որում ռազմական բաղադրյալի առկայությունը կրում էր հիմնական ծանրաբեռնվածությունը:

РФ НА ЮЖНОКАВКАЗСКОМ СТРАТЕГИЧЕСКОМ НАПРАВЛЕНИИ ПОСТСОВЕТСКИЙ ПЕРИОД

Д. АПИНЯН

В статье рассматриваются некоторые внутриполитические вопросы Российской Федерации в

постсоветский период, а также представляются тактические инициативы официальной Москвы на южнокавказском стратегическом направлении.

SOUTH CAUCASUS STRATEGIES OF THE RUSSIAN FEDERATION DURING POST- SOVIET YEARS

D. APINYAN

Some Russian Federation domestic political issues are considering in the article and also the tactic initiatives of official Moscow in the strategic direction of the South Caucasus are represented.

ГРУЗИНСКИЕ ВОИНЫ В ПОЛЬШЕ

М. КЕБАДЗЕ

Доцент

(Телавский государственный университет имени Якоба Гогешабили)

История польско-грузинских контактов начинается с конца XV века и насчитывает около пятисот лет. Вопрос грузинской эмиграции впервые возник в Польше в конце XVII века .

В войске Жечи Посполитой, вместе с другими иностранцами, служили и грузины, неустойчивая политическая ситуация заставила их покинуть родину. Некоторые грузинские эмигранты сыграли большую роль в политических связях между Польшей и Ираном, которые ставили себе целью вовлечь страну в антитурецкую коалицию. В первую очередь следует отметить Богдана Гурджиевского, который командовал ротой королевского войска, а также его брата, Парсадана.

В конце XVII века Польша прекратила активную антитурецкую политику. Вместе с тем прекратилась эмиграция грузин в Польшу, и имеется сравнительно мало информации о пребывании в Польше грузин в течение всего XVIIIв .

В начале 19 века Грузия также как и Польша, потеряла свою независимость. В 1801 году к России присоединили Восточную, а позднее и Западную Грузию. Находившиеся на юге России грузины - политические беженцы, военные и служащие, а позднее торговцы, предприниматели и студенты - стали все чаще появляться на польской земле. До ноябрьского восстания их число в автономии Польского королевства было сравнительно небольшим. Во второй половине 19 века число грузин возросло. Большая их часть обосновалась в Варшаве, представлявшей собой административный, военный и просветительный центр.

После падения Грузинской Демократической республики Ноэ Жордания, руководитель изгнанного грузинского правительства, немедленно обратился к дружественным народам, в основном, французам, грекам и полякам с просьбой оказать помощь